որոշումների և/կամ գործողությունների ոչ իրավաչափ լինելու փաստի հաստատումը ինքնին հանգեցնում է մինչև իրավունքի խախտումը եղած դրությունը վերականգնելուն, ուստի Դատարանը գտնում է, որ ՀՀ քաղաքաշինության կոմիտեի միջև 27.02.2024թ. գնման պայմանագիրը կնքված համարելու պահանջը առարկայազուրկ է և ենթակա չէ բավարարման:

Անդրադառնալով *«այդ թվում՝ դրան առնչվող պայմանագրի և որակավորման ապահովման մասով նախատեսված գործողությունները»* ոչ իրավաչափ ճանաչելու պահանջին, ապա Դատարանը հարկ է համարում արձանագրել, որ վկայակոչվածը ոչ թե գործողություն (անգործություն) կամ որոշում է, այլ պայմանագիրը միակողմանի լուծելու գործողության հիմքում դրված փաստական հանգամանքներ, ինչից հետևում է, որ նշված պահանջը ևս հիմնազուրկ է և ենթակա չէ բավարարման:

5. <u>Դատարանի ծախսերի բաշխման վերաբերյալ Դատարանի պատճառաբանությունները.</u>

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 101-րդ հոդվածի համաձայն՝ դատական ծախսերը կազմված են պետական տուրքից և գործի քննության հետ կապված այլ ծախսերից:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 109-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են բավարարված հայցապահանջների չափին համամասնորեն:

Հաշվի առնելով վերոգրյալը և այն հանգամանքը, որ հայցը ենթակա է բավարարման, իսկ Հայցվորի կողմից 30,000.00 ՀՀ դրամի չափով նախապես վճարվել է պետական տուրքի գումար, Դատարանը գտնում է, որ ՀՀ քաղաքաշինության կոմիտեից հօգուտ «Հիդրո» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության ենթակա է բռնագանձման նաև 30,000.00 ՀՀ դրամ՝ որպես հայցադիմումի համար «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքով նախատեսված և նախապես վճարված պետական տուրքի գումար:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 188-րդ, 189-րդ, 191-րդ, 192-րդ, 198-րդ, 241-րդ հոդվածներով՝ Դատարանը

Վ Ճ Ռ Ե Ց

1. «Հիդրո» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության ընդդեմ Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության կոմիտեի հայցը բավարարել մասնակի.

1.1 Ոչ իրավաչափ ճանաչել ՀՀ քաղաքաշինության կոմիտեի գլխավոր քարտուղարի 15.04.2024թ. ծանուցմամբ պայմանագիրը միակողմանի (ամբողջությամբ) լուծելու գործողությունները:

1.2 Որպես հետևանք՝ անվավեր ճանաչել «Հիդրո» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու վերաբերյալ ՀՀ քաղաքաշինության կոմիտեի 25.04.2024թ. որոշումը:

1.3 Մնացած մասով հայցը մերժել:

2. ՀՀ քաղաքաշինության կոմիտեից հօգուտ «Հիդրո» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության բռնագանձել 30,000.00 ՀՀ դրամ՝ որպես նախապես վճարված պետական տուրքի գումար:

Վճիռն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից և կարող է բողոքարկվել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարան:

Վճիռը կամովին չկատարվելու դեպքում այն կկատարվի պարտապանի հաշվին դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայության միջոցով:

ԴԱՏԱՎՈՐ **ԱԼԼԱ ՔՅՈՒՐՔՉՅԱՆ**

Տվյալ ֆայլերին կարող եք ծանոթանալ նաև մուտք գործելով "Էլեկտրոնային դատավարություն" համակարգ՝ cabinet.armlex.am